



ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ - ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀՈՍՔԵՐ.
ՀԱՅԱՑՔ ԲԻԶՆԵՍ ՀԱՄԱՅՆՔԻՑ

Գագիկ Մակարյան

Արդյունաբերողների և Գործարարների Միություն
Գործադիր Տնօրեն

13 Նոյեմբեր, 2009թ.

ՓՄՁ Խնդիրներ


Քաղաքական, իրավական և նորմատիվային բազան

- Մինիմալացնել շփումը չինովնիկի հետ, ձեռնարկությունների գրանցումն իրականացնել ինտերնետի միջոցով կամ մեկ պատուհանի սկզբունքով:
- Նախարարությունների կայքերը հաճախ պրեզենտացիոն բնույթ են կրում, որոնք մաս հաճախ հանրության հասանելի չեն, համակարգչային գիտելիքների պակասի կամ կայքերի հասցեները չիմանալու պատճառով:
- Եթե նոր օրենք ընդունվել կամ եղածը փոփոխվել է, ապա նախապատրաստական ժամանակաշրջանը պետք է որոշվի պատրաստվածության աստիճանին համապատասխան: Հակառակ դեպքում, ստացվում է որ օրենքի փոփոխություն արվում է գործարարին դժվարություններ ստեղծելու նրան տուգանքների ենթարկելու համար: Երբեմն օրենքն ավելի շուտ է մտնում կյանք քան պետության կողմից օրենքի կիրարկման համը անհրաժեշտ միջոցառումները:
- Ընդհանրապես ՀՀ-ում գործատուների շահերը ոտնահարվում են բոլոր ոլորտներում և մակարդակներում, մանավանդ ՓՄՁ շահերը:

ՓՄՁ խնդիրներ ֆինանսավորման և վարկավորման ոլորտում

- Տոկոսադրույքները դեռևս բարձր են՝ 15-24 % տարեկան (խոշոր բիզնեսի հետ մրցակցել հնարավոր չէ)
- Գրավի առկայությունն անշարժ գույքի կամ ոսկու և քանի որ մարզերում անշարժ գույքի արժեքը շատ ցածր է, այդ գրավը չի ընդունվում
- ՓՄՁ-ները հիմնականում ձևավորվել են անձնական, ընկերների կամ բարեկամների կողմից տրամադրվող միջոցների հաշվին, որոնք այլևս բավարար չեն հետագա զարգացումների համար:


Փորձել էք ստանալ ֆինանսական միջոցներ ձեր ձեռնարկության համար վերջին երկու տարիների ընթացքում



Հաղորդակցությունը Կառավարության հետ

- Կառավարությունը ինքնուրույն և որոշակիորեն ինքնամեկուսացված է իրականացնում քաղաքականությունների և օրենքների մշակումը՝ հազվադեպ խորհրդակցելով բիզնես համայնքների հետ: Այդ պատճառով չի հաջողվում ձևավորել ընթացակարգներ կամ ստանալ անհրաժեշտ աջակցություն:


Վերջին 2 տարում ձեր ձեռնարկություն այցելել է արդյոք որևէ պետական պաշտոնական անձ




Աղմինիստրատիվ համակարգերը

- Եթե պետական պաշտոնյան վատ է վերաբերվել կամ փորձել են անհիմն գումարներ կորզել հիմնականում ոչ մի տեղ, և ոչ մեկին չեն բողոքում : Անօգուտ է, որովհետև դատարանը չինովնիկի շահերն է պաշտպանում, դա լրացուցիչ միջոցների և ժամանակի անհիմաստ վատնում է:
- Հարկային մարմիններում լինեն հատուկ սենյակներ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու նպատակով:
- Հաճախ առաջանում է տպավորություն, որ պետությունը ոչ միայն չի աջակցում փոքր բիզնեսին, այլև խոչնդոտում է:

Վերջին երկու տարվա ընթացքում ենթարկվել եք արդյոք այլ հետապնդումների կամ ոտնձգությունների պետական պաշտոնատար անձանց կողմից:



Խնդրել են արդյոք ձեզ տալ կաշառք կամ վճարել ոչ օֆիցիալ պարզևատրություն վերջին երկու տարվա ընթացքում:




Անարդար մրցակցություն (ստվերային տնտեսություն)

- Այն ՓՄՁ-ները, որոնք փորձում են աշխատել օրենսդրական դաշտում (նույնիսկ մասնակի), դառնում են անարդար մրցակցության զոհ: Հնարավորության դեպքում մրցակիցը փորձում է շրջանցել օրենքով սահմանված ծախսերը կաշառքի կամ խախտումների միջոցով:
- Դրա վառ ապացույցն է Հայաստանում գործող 120000-ը գերազանցող ձեռնարկությունների թվաքանակը, որոնցից շուրջ 50%-ը չի գործում կամ հազիվ գոյատևում է: Մնացածն էլ, թույլ և հիվանդոտ ՓՄՁ-ներ են: Արդյունավետ գործող ձեռնարկությունների թիվը հազիվ հասնում է 2000-ի (ընդհանուրի 1.6%-ը):
- Գործարար միջավայրը համապատասխան չէ բիզնեսի օրինականացման համար: Հիմնականում, տնտեսությունը բաղկացած է խոշոր ձեռնարկություններից (կոնցեռններ) և միկրո ու փոքր ձեռնարկություններից: Իրական միջին ձեռնարկությունները շատ փոքրաթիվ են, որի արդյունքում արտահանման հոսքերում միջին և փոքր ձեռնարկությունների ներդրումը շատ չնչին է
- (տես TOP15 ապրանքատեսակով պայմանավորված արտաքին առևտուրը):

Տեղեկատվություն

- ՓՄՁ-ները ունեն տեղեկատվության հասանելիության դժվարություններ, կա՛մ չգիտեն որտեղ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, կա՛մ կորցրել են հետաքրքրությունը: Նրանք հաճախ կենտրոնանում են մեկ գնորդի կամ վաճառողի վրա:
- Տեղական սահմանափակ շուկա, ապրանք կամ ծառայություն: Արդյունաբերության և այլ վերլուծությունների կարիք ունեն:


Մովորաբար ինչպե՞ս եք դուք ստանում տեղեկատվություն և խորհրդատվություն իրավական և գործարարության հարցերի վերաբերյալ



Խնդիրներ համայնքներում


- Բիզնեսի կենտրոնացվածությունը քաղաքներում
- Գյուղական վայրերում, որտեղ կենտրոնացած է բնակչության 25%-ը, թերզարգացած են ենթակառուցվածքները:
- Վատ ճանապարհներ, սահմանափակ ոռոգում, երբեմն էլեկտրաէներգիայի պակաս և հաճախակի ընդհատումներ:
- Դեռևս կապի միջոցների և ինտերնետի ցածր հասանելիություն և ցածր որակ:

Ինչպե՞ս եք դուք ենթադրում զարգացնել ձեր ձեռնարկությունը մոտակա տարում




Գործարար միջավայր, 2005

Որքանով են նպաստում հետևյալ գործոնները գործարարության զարգացմանը (սանդղակ՝ 1-ից 5)




Գործարար միջավայր


Գործարարության հիմնական խոչընդոտներ (2005 թ. հոկտեմբեր)



Ինչպես կգործի ձեր ձեռնարկությունը մոտակա երկու տարիներին՝ նախորդ երկու տարիների համեմատությամբ:



Ի՞նչ ներքոթվարկված գործոնների վրա են հիմնված ձեր ենթադրությունները



Բարեփոխումներ և դեռևս առկա խնդիրներ (1)

- ՀՊԾ համակարգի աշխատակիցների ատեստավորման իրականացում, նախկինում ՀՊԾ շարքերը մուտք գործած ուստիկանության, դատախազության և այլ քննչական մարմինների կենսագրությամբ կադրերից համակարգը զտելու նպատակով: Կատարված փոփոխությունները դեռևս նվազագույն են:
- ՀՊԾ նոր առաքելությունը. Կայուն պետական եկամուտների ապահովում, “դեմքով դեպի հարկ վճարողը” սկզբունքի գերակայություն: Ստուգումներում էտիկայի նորմերի կոպիտ խախտումներ, մտադրված դրսևորումներ:
- Կառավարության աջակցությունը գործող և նոր ստեղծվող ձեռնարկություններին` խրախուսելով մրցակցության բարձրացումն ու նոր աշխատատեղերի ստեղծումը: Այս ուղղությամբ մասնավորապես իրականացվում է.
 - պետական երաշխիքների տրամադրում
 - սուբսիդավորման գործիքների կիրառում
 - կազմակերպությունների կապիտալներում պետական մասնակցություն

Բարեփոխումներ և դեռևս առկա խնդիրներ (2)

- Սակայն, բարձր տոկոսադրույքներ, անհրաժեշտ գրավի պահանջ, գործարար ծրագիրը դեռևս չի հանդիսանում երաշխիք: Արդյունքում պետությունը և մասնավոր բանկերը համարյա միատեսակ են գործում:
- Բիզնեսի վարման անբավարար կարողություններ, ֆինանսական ցածր հնարավորություններ և փորձառության պակաս, իրականում պահանջվող միջոցների վերաբերյալ թյուր պատկերացումներ
- Ցածրորակ գործարար ծրագրեր, բիզնեսի պլանավորման և կառավարման փորձի պակաս
- Բիզնեսի ցածր արտադրողականություն, ֆինանսական միջոցների անարդյունավետ օգտագործում, որը հանգեցնում է ցածր արդյունքների
- Բիզնեսի սկսման չափանիշով 2009թ-ին ՀՀ-ն զբաղեցրել է 65-րդ տեղը, իսկ առաջիկա տարվա համար սկսկալվում է զբաղեցնել 21-րդ տեղը:
- Իրականում ՀՀ-ում ձեռնարկությունների գրանցման, ինչպես նաև լիցենզավորման գործընթացներում վերջին տարիներին արձանագրվել են սկսնհայտ ձեռքբերումներ

Բարեփոխումներ և դեռևս առկա խնդիրներ (3)

- Միաժամանակ, ի տարբերություն կազմակերպությունների գրանցման, բարդ ու ռեսուրսատար է կազմակերպությունների լուծարումը: Առանց համապատասխան տարածքային հարկային մարմինների կողմից լուծարային ստուգումների իրականացման, կազմակերպությունները չեն կարող համարվել լուծարված: Կազմակերպությունները ստիպված են լինում ամիսներ շարունակ սպասել, որպեսզի իրականացվեն այդ ստուգումները: Սա ևս նկատելի կոռուպցիոն ռիսկեր է պարունակում, քանի որ օրենսդրությունը չի սահմանում, թե լուծարման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո քանի աշխատանքային օրվա ընթացքում պետք է իրականացվի համապատասխան լուծարային ստուգումը, ինչն էլ լրջորեն խոչընդոտում է բիզնեսի առողջացմանը կամ վերակազմակերպմանը (հիշենք 120000 թիվը, որը գրանցված բիզնեսների կուտակման արդյունք է):

Բարեփոխումներ և դեռևս առկա խնդիրներ (4)

- ՓՄՁ-ների զարգացմանը զգալիորեն կնպաստի ԱՄԿ 189 կոնվենցիայի ընդունումը ՀՀ-ի կողմից, որը կկարգավորի հետևյալ խնդիրները:
 - քաղաքական-իրավական հիմքը, որը կվերաբերվի ձեռնարկությունների աճի և զարգացման բարենպաստ պայմանների խթանմանը
 - համազգային տվյալների հավաքագրումը ՓՄՁ-ների ոլորտում և դրանց շարունակական նկարագրի և վերլուծության ապահովումը
 - ձեռներեցության մշակույթի ձևավորումը
 - սպասարկման արդյունավետ ենթակառուցվածքների ձևավորումը՝ նպատակ ունենալով զարգացնել մրցունակ ձեռնարկություններ և ստեղծել մեծ թվով աշխատատեղեր

ՀՀ արտահանման ցուցանիշներ

Ցուցանիշները՝ հազար ԱՄՆ դոլար, աղբյուրը՝ ITC Trademap

Code		2004	2005	2006	2007	2008
	Ընդհանուր արտահանում բոլոր ՀՀ-ից արտահանվող ապրանքներով	722 912	936 977	1 003 961	1 121 222	1 055 013
1	'7202 Երկաթամիահավվածք	64 732	235 287	161 040	235 728	208 846
2	'7102 Ադամանդե քար	221 019	263 021	245 519	160 559	145 590
3	'2208 Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր	53 690	79 888	72 302	116 123	141 780
4	'2603 Պղինձի հանքաքար, խտանյութ	28 916	16 626	72 783	88 062	101 560
5	'7402 Պղինձ չգտված, պղինձե անող էլ. գտման համար	35 732	42 683	71 340	66 702	63 254
6	'2523 Ցեմենտ	6 480	14 460	22 013	32 206	38 373
7	'7607 Ալյումինե փայլաթիթեղ	170	186	3 007	37 259	36 404
8	'7113 Ոսկերչական իրեր	33 213	34 023	35 286	27 335	21 876
9	'2613 Մոլիբդենի հանքաքար, խտանյութ	42 743	27 524	16 013	28 641	20 809
10	'8102 Մոլիբդեն և Յպրանքներ մոլիբդենից, ներառյալ մնացորդները և ջարդոնը	7 865	17 731	25 652	24 439	19 703
11	'6212 Կրծքկալ, գոտի, սեղմիրան	25 325	20 446	19 165	19 174	17 224
12	'0901 Սուրճ	6 000	7 394	9 763	14 660	15 251
13	'4002 Արհեստական կաուչուկ, ֆակտիս, լատեքս	8 927	7 030	24 171	23 721	13 410
14	'7010 Ապակե շշեր, բճնկաներ և Յյլ տարաներ	1 415	3 483	5 806	17 266	10 426
15	'8529 Ռ-ադիոսարքի և հեռուստացույցի միջնորդիչ մասեր	2 032	215	1 405	9 891	8 220
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ նշված 15 ապրանքների համար (շուրջ 80%՝ 2008)	538 259	769 997	785 265	901 766	862 726

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

010 524472

gag_mak@yahoo.com